ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՆՈՐԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ ԵՒ ՆՐԱ ԱՂԲՅՈՒՐԸ

Թ-Ժ դարերի պատմիչ Թովմա Արծրունու Պատմությունը[1] արժեքավոր աղբյուր է ոչ միայն միջնադարյան Հայաստանի եւ հարեւան երկրների, այլեւ Հին Արեւելքի պատմության համար: Այս հանգամանքը հետազոտողների կողմից պատշաճ գնահատականի չի արժանացել: Ավելին. շրջանառվել է, թե իբր «Արծրունյաց տան պատմության» առաջին դպրությունը, որտեղ պատմիչը ներկայացնում է նախնական ժամանակներից մինչեւ Ե դարի կեսն ընկած մի ամբողջական համակարգված պատմություն, աղբյուրագիտական տեսանկյունից ունի երկրորդական նշանակություն[2]: Մ. Աբեղյանը եւս կարծում է. «Պատմության այս մասն առանձին արժեք չունի. երեւում է, որ հեղինակը շատ հերյուրած բաներ է մտցրել գրքի մեջ»[3]:

Սակայն մեր խորին համոզմամբ, Թովմա Արծրունու երկի այդպիսի որակումը չունի բավական հիմքեր: Ինչ վերաբերում է երկի արտաքին կողմին, բնավ չենք կարծում, որ Թովմա Արծրունու ներկայացրած Արծրունիների նախնիների վերաբերյալ պատմությունը պարտադիր պետք է իրական լիներ. չպետք է մոռանալ, որ հեղինակը պատվեր էր կատարում:

Ինչեւէ, մեր կարծիքով ավելի իրատեսական է Վ. Ներսիսյանի այն պնդումը, թե **Թովման հիմնականում ստուգապատում գրող է**[4]:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ բոլոր հետազոտողները միակարծիք են, որ Թովմա Արծրունին եղել է ժամանակի ուսյալ, գիտուն եւ հեղինակավոր վարդապետներից մեկը: Իր պատմությունը շարադրելիս նա օգտագործել է հայ եւ օտար աղբյուրներ՝ թե՛ գրավոր եւ թե՛ բանավոր-ժողովրդական: Ըստ երեւույթին, նա այդ բոլոր օտար աղբյուրները կարդացել է բնագրերով[5]:

Թովմա Արծրունին իր «Յառաջաբանութիւն»-ում եւ ամբողջ առաջին դպրությունում հիշատակում է այն աղբյուրները, որոնցից օգտվել է: Սակայն կան աղբյուրներ, որ ոչ միշտ է հիշում: Այս առումով Վ. Վարդանյանը նշում է. «Նման վերապահումը հատուկ էր հին եւ միջնադարյան բոլոր հեղինակներին, որոնք անպայման հենվում էին որեւէ աղբյուրի վրա, բայց ոչ միշտ էին այն հիշատակում: Այն աղբյուրները, որոնցից օգտվել է Թովմա Արծրունին, մեծ մասամբ կորել են»[6]:

---

1 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», բնագիրը, աշխարհաբար թարգմ. եւ ծանոթագր.՝ Վ. Մ. Վարդանյան, Եր., 1985:

2 **Ս. Տ. Մելիք-Բախշյան**, Թովմա Արծրունի, Հայոց պատմության աղբյուրագիտություն (Հնագույն ժամանակներից մինչեւ ԺԸ դարի վերջը), Եր., 1979, էջ 155, **Վ. Վարդանյան**, Ներածություն, Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1978, էջ 8:

3 **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 495:

4 **Վ. Ներսիսյան**, Թովմա Արծրունի, «Հայ մշակույթի նշանավոր գործիչները. Ե-ԺԸ դարեր», Եր., 1976, էջ 159:

5 **Վ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 7–8, **Ս. Տ. Մելիք-Բախշյան**, նշվ. աշխ., էջ 154, **Վ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 159–160, «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. Գ, Եր., 1976, էջ 323:

6 **Վ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 8:

Թովմա Արծրունու հիշատակած օտար աղբյուրների թվին են պատկանում Հերոդոտոսը, Մանեթոնը, Բերոսոսը, Հովսեփոս Փլավիոսը (Եբրայացին), Եւսեբիոս Կեսարացին եւ այլն[7]:

Երկի ամբողջ ընթացքից երեւում է, որ Թովմա Արծրունին իր օգտագործած աղբյուրներին կուրորեն չի հետեւում, այլ քննադատական մոտեցում է ցուցաբերում: Հենց երկի առաջին գլխում նա նշում է, որ անցյալի բազում պատմություններից եւ հին պատմությունների գրավոր մատյաններից վերցրել է այն ամենն, ինչն արժեքավոր է. «...հնախօսս շարագրական մատեանս եւ ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ»[8]: Սակայն նյութի վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում «Եւ անդէն զտարակարծելի գիւտիցն յոյս երկրայութեան՝ յայլոց քննողական աշխատութեանց եգից առ ընթեր թելադրութեամբ. չի անտի ի բաց կացցեն տարակուսական մտածութեանց»[9]:

Օգտագործած աղբյուրներին քննադատաբար մոտենալը եւ օտար հեղինակների հաղորդումներին որոշ նյութեր ավելացնելը բնորոշ է ոչ միայն Թովմա Արծրունուն, այլեւ միջնադարյան շատ հայ պատմիչների[10]: Ըստ Ս. Տ. Մելիք - Բախշյանի մեկ այլ դիտարկման, որի համաձայն՝ պատմիչը թեեւ իր աշխատության մեջ քիչ է ուշադրություն դարձնում ժամանակագրության հարցերին, սակայն հիշատակված թվականները մեծ մասամբ ճիշտ են, վստահելի, որը հաստատում են օտար աղբյուրները[11]:

Կարելի է ամենայն վստահությամբ պնդել, որ Թովմա Արծրունու երկը որպես սկզբնաղբյուր չի գիջում եւ ոչ մի աղբյուրի: Այդուհանդերձ, պետք է ցավով արձանագրել այն հանգամանքը, որ արծրունիագիտությունը ուսումնասիրման բավականին նեղ ոլորտ է ընդգրկում եւ դուրս չի գալիս հայագիտության շրջանակներից: Վերջերս հրատարակած իր աշխատություններից մեկում արեւելագետ Ա. Քոսյանը խնդրի վերաբերյալ նշում է, որ հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները հաճախ, որպես կանոն, ավելի ստույգ են եւ գրեթե անհասանելի արտասահմանյան մասնագետներին[12]:

Թովմա Արծրունին իր հիշատակումներով տարբերվում է նաեւ հայ պատմիչներից: Եթե փորձենք համադրել նրա առաջին դպրության սկզբի մի քանի գլուխները եւ մյուս հայ պատմիչների երկերը՝ մասնավորապես Մովսես Խորենացու Ա գիրքը[13], Սեբեոսի Ա-Բ գլուխները[14] եւ Հովհաննես Դրասխանակերտցու երկի առաջին մասը[15], ապա կտեսնենք, որ հայ պատմիչների հիշատակումներն իրենց բնույթով խիստ տարբեր են եւ գրեթե անկրկնելի: Ստորեւ ցանկանում ենք նշել այն կարեւոր տարբերությունը, որն առկա է Արծրունյաց պատմիչի երկում:

---

7 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», I, Ա - Ը:

8 Անդ, Ա:

9 Անդ:

10 **Ս. Տ. Մելիք - Բախշյան**, նշվ. աշխ., էջ 154 - 155, **Վ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 8, **Վ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 159:

11 **Ս. Տ. Մելիք-Բախշյան**, նշվ. աշխ., էջ 156, **Վ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 19, **Վ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 160:

12 **Ա. Քոսյան**, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր., 2004, էջ 8:

13 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Եր., 1981:

14 **Սեբեոս**, Պատմություն, Եր., 2004:

15 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Եր., 1996, էջ 16-26:

Թովմա Արծրունին իր պատմության առաջին դպրության Դ գլուխը վերնագրել է «Եթէ ո՛րպէս կարգ ըստ կարգի եկաց թագաւորութիւնն Ասորեստանեայց մինչեւ ի Կիւրոս պարսիկ», իսկ գլխի վերջում որպես՝ «թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն» ներկայացնում է նորբաբելոնյան արքաների ցանկը:

Այս արքայացանկը եւ մի քանի պատմական դեմքերի վերաբերյալ հիշատակություններն այն կարեւոր խաղաքարերն են, որ բարձրացնում են Թովմա Արծրունու երկի առաջին մասի արժեքը: Անկասկած, հայ պատմիչների գործերը որակյալ են, եւ դրա ամենավառ ապացույցը բազում գիտական աշխատություններն ու հոդվածներն են: Որակի մասին է խոսում նաեւ նյութի վերաբերյալ հայ պատմիչների յուրահատուկ մոտեցումը. ձգտել զատել իրականը ոչ իրականից: Արդյունքում այն, ինչ առաջին հայացքից կասկածելի է թվում, վերջում պարզվում է, որ հենց այն իրականն է, որ կա: Երկրորդ, երրորդ անգամ հայ պատմիչներին բացելուց հետո կասկածը գրեթե իսպառ վերանում է:

Ինչեւէ, անդրադառնալով Թովմա Արծրունու նորբաբելոնյան արքայացանկին՝ նշենք, որ այն արեւելագիտական մեծ նշանակություն ունի: Ի տարբերություն որոշ օտար պատմիչների, հայ պատմիչի կողմից տրված Քաղդեական արքայացանկն ավելի իրական է եւ ունի հետեւյալ տեսքը՝

Նաբուպաղասարոս ամս **ի** (Նաբոպալասար՝ 20 տարի)

Նաբուգոդոնոսոր ամս **խգ** (Նաբուգոդոնոսոր՝ 43 տարի)

Ամիղմարուդաքոս ամս **բ** (Ամել – Մարդուկ՝ 2 տարի: Վերջինս Աստվածաշնչում հանդես է գալիս Իլմարովդաք[16] եւ Եղմարովդաք[17] ձեւերով)

Ներիգղիսարոս ամս **դ** (Ներիգլիսսար՝ 4 տարի)

Նաբունիդոս ամս **ժե** (Նաբոնիդ՝ 15 տարի)[18]:

Նշելով նորբաբելոնյան արքաների ցանկը՝ պատմիչը մոռացության է մատնել իր աղբյուրը, որը խնդրի ուսումնասիրության գործում ավելորդ դժվարություններ է ստեղծում: Ինչպես արդեն նշել ենք, Թովմա Արծրունին իր երկի առաջաբանում եւ առաջին դպրության մի քանի գլուխներում հիշատակում է իր օգտագործած աղբյուրները՝ որոնց թվում է բաբելոնացի քուրմ Բերոսոսի (Bel'reušu) «Բաբելոնիկա» երկը: Սակայն մեր կարծիքով Թովմա Արծրունին իր ձեռքում չի ունեցել Բերոսոսի երկը, այլ օգտվել է միջնորդավորված՝ Եւսեբիոս Կեսարացու միջոցով: Վերջինս էլ, ամենայն հավանականությամբ, հին շրջանի պատմության վերաբերյալ եղել է նրա հիմնական աղբյուրներից մեկը: Շուտով կհամոզվենք, որ Թովմա Արծրունու ներկայացրած արքայացանկը տարբերվում է Եւսեբիոս Կեսարացու ցանկից: Վերջինս իր հերթին ավելի է բարդացնում խնդիրը, քանզի հայ պատմիչի երկում պահպանված ցանկը ընդհանրապես տարբերվում է մյուս պատմիչների պատմություններում պահպանվածներից: Մնում է միայն հուսալ, որ ինչ-որ կերպ հնարավոր կլինի գտնել այդ տարբերության պատճառը կամ նրա աղբյուրը:

Իր երկի «Յառաջաբանութիւն»-ում Թովմա Արծրունին նշում է. «Գունակ սմին (Մովսես

16 Դ Թագաւորաց, ԻԵ 27, «Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների», Կ. Պոլիս, 1896 (արեւելահայերեն թարգմանությունը՝ 1989):

17 Երեմիա ԾԲ 31:

18 **Թովմա Արծրունի**, I, Դ:

մարգարե - հեղ.) եւ Բերոսոս ոմն եւ Աբիդենոս Քաղդեացւոյ իմաստունք ... զմարդկայնոց սեռից կենցաղավարութիւնս կանոնադրեալ դրոշմեցին ի մատեանս քաղդէական պատմութեանցն: **Եւ ի սոցունց այլք** հետազօտեալ բազում աշխատութեամբ, որ մինչ առ մեզ հասեալ շարագրեցին, թե ո՛վ ոք ի թագաւորաց աշխարհակալաց՝ որքան ամս եւ ժամանակս կեցեալ տիրեցին, եւ կամ ո՛վ ոք միւս քան զմիւս առաւելեաց ի հոգաբարձութիւն աշխարհի»[19]: Բաբելոնացի մատենագիրներ Բերոսոսի եւ Աբյուդենոսի մասին, բացի վերոհիշյալ հիշատակությունից, Թովմա Արծրունու երկում այլեւս չենք հանդիպում, իսկ թե ովքեր էին մյուս մատենագիրները, ում անունները պատմիչը չի նշում, դժվար է ասել:

Ինչպես արդեն նշել ենք, խնդրո առարկա հիշատակությունում Թովմա Արծրունին թեեւ հեռանում է սկզբունքներից, այն է՝ նշել իր աղբյուրը, սակայն միեւնույն ժամանակ նա բավականին շատ հղումներ է կատարում: Հեղինակը, որպես աղբյուր մեծ ուշադրություն է դարձնում Եւսեբիոս Կեսարացուն՝ «Եւ արդ ըստ Եւսեբեա», «Հաւասրիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի» եւ այսպես շարս անգամ[20]: Բացի վերոհիշյալ հեղինակներից, նա հիշատակում է նաեւ Ափրիկանոսին, Արիստոնիկոս Քաղդեացուն, Հուլիանոս Հալիկառնասցուն եւ այլոց[21]:

Արեւելագետների բազմամյա քրտնաջան աշխատանքների արդյունքում մենք այսօր հստակ գիտենք Միջագետքի ոչ միայն թագավորական հարստությունների ու թագավորների հաջորդականության, այլեւ նրանց կառավարած տարիների մասին: Նոր Բաբելոնիայի արքաների ցանկն ունի հետեւյալ տեսքը՝

Նաբպալասար (625-605 թթ. Ք. ա.)

Նաբուգոդոնոսոր II (604-562 թթ. Ք. ա.)

Ամել – Մարդուկ (561-560 թթ. Ք. ա.)

Ներիգլիսսար (559-556 թթ. Ք. ա.)

Լաբաշի – Մարդուկ (556 թ. Ք. ա.)

Նաբոնիդ (556-539 թթ. Ք. ա.):

Միջագետքի նախահաքեմենյան շրջանի պատմության մասին ինչպես հայ, այնպես նաեւ անտիկ պատմիչները հիմնականում տեղեկություններ են քաղել Բերոսոսից. ոմանք անմիջականորեն, իսկ ոմանք, ինչպես Թովմա Արծրունին, միջնորդավորված՝ Եւսեբիոս Կեսարացու միջոցով:

Բերոսոսի կենսագրությունից հայտնի է, որ նա ապրել է Ք. ա. Գ դարում եւ եղել է Բաբելոնի քուրմերից մեկը: Հունարեն նա գրել է Բաբելոնի պատմությունը, որը հայտնի է Բաբելոնիկա (Babyloniaca) կամ Քաղդեիկա (Chaldaica) անվամբ: Բերոսոսի պատմությունը ցավոք կորել է, եւ երկից հայտնի է միայն շուրջ 22 մեջբերումներ եւ 11 հիշատակություններ, որոնք պահպանվել են անտիկ պատմիչների երկերում[22]:

Նորբաբելոնյան արքաների կառավարման մասին ամենաընդարձակ հիշատակութ-

19 **Թովմա Արծրունի**, Յառաջաբանութիւն հեղինակին:

20 Անդ, Ի, Ա:

21 Անդ:

22 www.ancientrome.ru/antlitr/berossos/index.htm:

յունները պահպանվել են Հովսեփոս Փլավիոսի[23] եւ Եւսեբիոս Կեսարացու[24] երկերում: Սակայն, ի տարբերություն Հովսեփոս Փլավիոսի (ինչպես վերջերս հիմնավորապես ապացուցել է Գ. Սփերլինգը, հրեա պատմիչը օգտվել է անմիջապես Բերոսոսից)[25]՝ Եւսեբիոս Կեսարացին Բերոսոսից օգտվել է միջնորդավորված կերպով, այն է՝ Կորնելիոս Ալեքսանդր Բազմավեպից (Polyistor): Իսկ Եւսեբիոսից պետք է օգտված լիներ Թովմա Արծրունին, սակայն նյութի մանրազնին հետազոտությունը չի հանգեցնում վերոշարադրյալին:

Անդրադառնալով Հովսեփոս Փլավիոսի երկու երկերի՝ «Հրեական հնախոսություններին» եւ «Ընդդեմ Ապիոնի» Նոր Բաբելոնիայի արքաների մասին հիշատակություններին, հարկ ենք համարում նշել, որ երկու երկերի միջեւ կան լուրջ տարբերություններ:

«Հրեական հնախոսություններում» պահպանված ցանկը հետեւյալն է՝

Նաբոպոլասար՝ 21 տարի

Նաբուգոդոնոսոր՝ 43 տարի

Ավիլամարոդաք՝ 18 տարի

Նիգլիսար՝ 40 տարի

Լավոսորդաք՝ 7 տարի

Վալտասար, որը կրում է բաբելական Նավոանդիլ անունը՝ 17 տարի[26]:

Ինչպես երեւում է, ցուցակում արքաների կառավարման տարիները չեն համապատասխանում նրանց իրական կառավարման տարիներին: Ակնհայտ է նաեւ Թովմա Արծրունու եւ Հովսեփոս Փլավիոսի ցուցակների միջեւ եղած տարբերությունը, եւ հետեւաբար, վերջինիս ցուցակը չէր կարող աղբյուր հանդիսանալ Արծրունյաց տան պատմիչի համար:

Իսկ «Ընդդեմ Ապիոնի» ցուցակն ունի հետեւյալ տեսքը՝

Նաբոպալասար՝ 21 տարի

Նաբուգոդորոսոր՝ 43 տարի

Էվիլմարադուք՝ 2 տարի

Ներիգլիսար՝ 4 տարի

Լաբորոսոարդոք՝ 9 ամիս

Նաբոննիդ՝ 17 տարի[27]:

Հովսեփոս Փլավիոսի այս հիշատակությունը, որի աղբյուրն անկասկած Բերոսոսն է, համապատասխանում է մասնագետների կողմից ընդունված վերոհիշյալ ցանկին՝ բացի Լաբաշի – Մարդուկի կառավարման ամիսներից:

Եւսեբիոս Կեսարացու հիշատակությունների աղբյուրն, ինչպես արդեն նշեցինք,

---

23 Иосиф Флавий, Иудейские древности, О древности иудейского народа (Против Апиона), В 2–х томах, Москва, 2003.

24 Հայերեն թարգմանությունը տե՛ս «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակագրեալ երկմասնեայ ի հայերէն թարգմանութենէ յեղեալոյ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց, թարգմանեալ ի լատին բարբառ աշխատութեամբ հ. Մկրտիչ վ. Ազգերեանց»: Մասն 1, Ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818, մասն 2, Քրոնիկոն կանոն, Վենետիկ, 1918:

25 К. О. Йонсон, Пересмотренные втемена язычников, 4-е изд., Москва, 2004, էջ 93, ծան. 7, եւ հղված աղբյուրները:

26 Иосиф Флавий, Иудейские древности, том 1(книги 1 – 13), X – XI, и XI, 1 – 3:

27 Անդ, том 2 (книги 13 – 20), О древности иудейского народа (Против Апиона), I, 145 -153, Москва, 2003, էջ 478 – 481:

Բազմավեպն է, որի միջոցով էլ նա հղումներ է կատարել Բերոսոսից: Եւսեբիոսից Թ-ովմա Արծրունին եւս շատ հղումներ ունի: Օրինակ՝ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի (704-681 թթ. Ք. ա.) կառավարման տարիները, որը երկուցուցակներում 18 է, նրա որդու՝ Ասարհադդոնի (680-669 թթ. Ք. ա.) կառավարման 8 տարին, որը պատմիչների երկերում հանդես է գալիս Ասորդանիս ձեւով, հետո Սամոգեսինը՝ 21 տարի եւ այլն[28]: Եւսեբիոսի երկում այս ամենը սկսվում է Բազմավեպի պատմածով, կամ Բազմավեպը՝ հետեւելով Բերոսոսին, այսինքն, նա չի թաքցնում, որ Բերոսոսից օգտվել է Բազմավեպի գործում պահպանված հղումներով: Սակայն կա նաեւ շեղում. Եւսեբիոսը նշում է, որ Բազմավեպը, հետեւելով Բերոսոսին, հաղորդում է, որ Նաբուգոդոնոսորից հետո 12 տարի շարունակ իշխել է նրա որդի Ամիլմարդուքոսը, իսկ Նաբոդեն՝ 17 տարի[29]: Եթե փորձենք Եւսեբիոս Կեսարացու եւ Թ-ովմա Արծրունու ցուցակները համադրել, ապա բացի նրանց միջեւ եղած հաղորդումների տարբերություններից, կստացվի այնպես, որ Եւսեբիոս Կեսարացուն նույնպես պետք է բացառել որպես նորբաբելոնյան արծրունիական արքայացանկի աղբյուր:

Նորբաբելոնյան ժամանակաշրջանի եւ մասնավորապես արքաների ցանկի ու նրանց կառավարման տարիների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունները այսօր մասնագետների համար գրեթե ոչ մի բարդություն չեն ներկայացնում: Պեղումների արդյունքում բավականին մեծ թվով սեպագիր փաստաթղթեր ու վավերագրեր, արքայական արձանագրություններ ու ժամանակագրություններ են հայտնաբերվել, որ այսօր արդեն Բերոսոսի ցուցակը պետք չէ մասնագետ-պատմաբաններին վերոհիշյալ խնդիրը կարգավորելու համար:

Իսկ մենք սեպագիր եւ անտիկ աղբյուրների համադրման եղանակով կփորձենք գտնել Թ-ովմա Արծրունու աղբյուրը:

Նորբաբելոնյան արքայական արձանագրություններից խիստ ուշագրավ է այսպես կոչված Լոնդոնի Բրիտանական թանգարանի[30] «Նորբաբելոնյան ժամանակագրությունները»[31]: Այդ ժամանակագրություններից մեզ համար կարեւոր են «Ժամանակագրություն 2-րդը» (B.M. 25127), 3-րդը (B.M. 21901), 4-րդը (B.M. 22047), որոնք ընդգրկում են Նաբոպալասարի կառավարման 20 տարիները, իսկ «Ժամանակագրություն 5-րդը» (B.M. 21946)՝ Նաբոպալասարի կառավարման վերջին տարին ու Նաբուգոդոնոսորի կառավարման առաջին 10 տարիները, 6-րդը (B.M. 25124)՝ Ներիգլիսսարի, իսկ 7- րդը (B.M. 35382)՝ Նաբոնիդի կառավարման տարիները[32]:

Վերոհիշյալ «Ժամանակագրությունները» հստակ տեղեկություններ են հայտնում Նոր Բաբելոնիայի արքաների կառավարման տարիների մասին՝ ըստ այդմ Նաբոպալասարը կառավարել է 21 տարի, Նաբուգոդոնոսորը՝ 43, Ամել – Մարդուկը՝ 2, Ներիգլիսսարը՝ 4, Լաբաշի – Մարդուկը՝ մի քանի ամիս եւ Նաբոնիդը՝ 17 տարի: Եւ ինչպես դժվար չէ նկատել, այն որոշ կետերում բավականին համահունչ է Թ-ովմա Արծրունու ներկայացրած ցանկին:

---

28 **Թ-ովմա Արծրունի**, I, Դ, «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ», էջ 13 – 15:

29 Դ, Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ, էջ 13:

30 Տե՛ս Բրիտանական թանգարանի պաշտոնական կայքում՝ www. thebritishmuseum. ac.uk/compass/ixbin/hix-client.exe?

31 Տե՛ս **A. K. Grayson**, Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, New York: J. J. Augustin Publisher, 1975, եւ **D. J. Wiseman**, Chronicles of Chaldaean Kings (626 – 556 B.C.) in the British Museum, London, 1956:

32 **A. K. Grayson**, նշվ. աշխ., էջ 80 – 110, **D. J. Wiseman**, նշվ. աշխ., p. 2, 50 – 77:

Հաջորդ սեպագիր աղբյուրը Ուրուկի թագավորական ցուցակն է, որի պահպանված մասը ներառում է Բաբելոնի թագավոր Կանդալանուի (Աշշուրբանիպալ) (647-627 թթ. Ք. ա.) կառավարման շրջանից մինչեւ Պարսից Աքեմենյան Դարեհ Ա (522-486 թթ. Ք. ա.), իսկ հակառակ երեսին՝ սկսած Դարեհ Գ Կոդոմանոսից (336-330 թթ. Ք. ա.) մինչեւ Սելեւկյան թագավոր Սելեւկոս Բ Կալլինիկոսը (247-226 թթ. Ք. ա.)՝ ընկած ժամանակահատվածում գահակալած թագավորներին, իրենց կառավարման տարիներով հանդերձ[33]: Ուրուկի թագավորների ցուցակը մեզ հետաքրքրող խնդրում ունի հետեւյալ տեսքը՝

6) MU XXI ^{md} Nabo - apla - uṣur

7) [M]U XLIII ^{md} Nabo – kudurrī - uṣur

8) [M]U II ^{m} Amīl – ^{d} Marduk

9) [MU] [III] VIII ITI ^{md} Nergal$_2$ – □ar - uṣur

10) [(...)] III ITI ^{m}La – ba – □i - ^{d}Marduk

11) [MU] [XVII (?)] ^{md} Nabu – na – id

6) 21 տարի՝ Նաբոպալասար

7) 43 տարի՝ Նաբուգոդոնոսոր

8) 2 տարի՝Ամիլ – Մարդուկ

9) 3 տարի 8 ամիս՝ Ներիգլիսսար

10) 3 ամիս՝ Լաբաշի – Մարդուկ

11) 17 (?) տարի՝ Նաբոնիդ:

Ուրուկի թագավորների ցուցակն իր ճշգրտությամբ կասկած չի հարուցում: Եւ ինչպես ակնհայտորեն երեւում է, թագավորների անունները եւ նրանց կառավարման տարիները համաձայնեցվում են այն ցուցակի հետ, որ մեզ ներկայացնում են Բերոսոսն ու Թովմա Արծրունին՝ բացառությամբ Լաբաշի – Մարդուկի կառավարման շրջանի, որը երեք ամսվա փոխարեն Բերոսոսի երկում ինն ամիս է, իսկ Թովմա Արծրունու երկում թագավորի անունը բացակայում է: Մի հանգամանք, որը կարծես թե գալիս է ապացուցելու այն, որ Թովմա Արծրունին որպես աղբյուր չի օգտագործել Բերոսոսի աշխատությունը, ինչպես նաեւ այն, որ Եւսեբիոս Կեսարացուց բացի, հայ պատմիչը պետք է ունենար մեկ այլ աղբյուր եւս, հակառակ դեպքում նրանց միջեւ տարբերություններ գրեթե չպետք է լինեին, եւ նրանք ուղղակի պետք է հետեւեին մեկը մյուսին:

Հաջորդ աղբյուրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, այսպես կոչված «Արքայական կանոնն» է, որը հայտնի է նաեւ «Պտղոմեոսի կանոն» անվամբ: Այն թագավորների ցուցակ է՝ կառավարման տարիներով հանդերձ եւ ընդգրկում է (Ք. ա. 747 – Ք. հ. 161) թվականների ընթացքում կառավարած բաբելոնական, պարսկական, սելեւկյան եւ հռոմեական թագավորների ու կայսրերի անունները՝ իրենց կառավարման տարիներով: Արքայական կանոնը սկսվում է Բաբելոնի թագավոր Նաբոնասարի (747 – 734 թթ. Ք. ա.) կառավարման առաջին տարով եւ վերջանում հռոմեական կայսր Անտոնիոս Պիոս կայսրով (138 – 161 թթ.): Անվանի գիտնական – տոմարագետ Է. Բիքերմանն, անդրադառնալով Արքայական

33 www.livius.org/k/kinglist/uruk.html, К. О. Йонсон, նշվ. աշխ., էջ 106 – 107, հղված գրականությամբ հանդերձ:

կանոնին, համակարգել է այն՝ նշելով թագավորների ոչ միայն կառավարման թվականներն ու տարիները, այլեւ ամիսները[34]:

Արքայական կանոնի մեզ հեպաքրքրող մասն ունի հետեւյալ տեսքը՝

Nabopalassa'ros - 21 տարի (27.01 625 – 20.01 604 թթ. Ք. ա.՝ ըստ Է. Բիկերմանի)

Nabokolassa'ros - 43 տարի (21.01 604 – 10.01 561 թթ. Ք. ա.)

Illoarouda'mos - 2 տարի (11.01 561 – 9.01 559 թթ. Ք. ա.)

Nerigasolassa'ros - 4 տարի (10.01 559 – 8.01 555 թթ. Ք. ա.)

Nabonadios - 17 տարի (9.01 555 – 4.01 538 թթ. Ք. ա.)

Ինչպես երեւում է, Արքայական կանոնը գրեթե համապատասխանում է Թովմա Արծրունու ցուցակին: Բացառություն են կազմում միայն Նաբոպալասարի եւ Նաբոնիդի կառավարման տարիները, որոնցից առաջինը Թովմա Արծրունու երկում տրված է 20 տարի, իսկ երկրորդին՝ 15 տարի: Երկու ցուցակում էլ բացակայում է Լաբաշի – Մարդուկի անունը: Արքայական կանոնի պարագայում այն հասկանալի է, քանի որ կանոնը հաշվի է առնում միայն ամբողջ տարիները, եւ քանզի նա կառավարել է ընդամենը երեք ամիս (ըստ Ուրուկի թագավորների ցուցակի)՝ չէր կարող տեղ գտնել Արքայական կանոնի ցուցակում:

Ակնհայտ է նաեւ Արքայական կանոնի եւ Թովմա Արծրունու ցուցակի տարբերությունը Եւսեբիոս Կեսարացու գրքում պահպանվածից: Ինչպես ակնհայտ երեւում է, Թովմա Արծրունու ցուցակն ավելի շուտ համապատասխանում է Արքայական կանոնին, քան մնացած ցուցակներից որեւէ մեկին:

Իսկ ինչպե՞ս կարելի է բացատրել այդ նմանությունը: Ամենայն հավանականությամբ Թովմա Արծրունին հույն կամ հռոմեացի որեւէ պատմիչի միջոցով ծանոթ է եղել Արքայական կանոնին, որից օգտվել է, հակառակ դեպքում խնդիրն այլ լուծում չունի եւ եթե ոչ այս կերպ, ապա մնում է միայն հուսալ, որ ինչ-որ մի ժամանակ հնարավոր կլինի գտնել վերոհիշյալ հարցի պատասխանը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նորբաբելոնյան արքայացանկի համար Թովմա Արծրունու աղբյուրը եղել է Արքայական կանոնը, թեկուզեւ միջնորդավորված կերպով:

Իսկ ինչպե՞ս կարելի է բացատրել Թովմա Արծրունու ցուցակի եւ մնացած ցուցակների միջեւ եղած տարբերությունները: Եթե Լաբաշի – Մարդուկի պարագային խնդիրը պարզ է, ապա Նաբոպալասարի եւ Նաբոնիդի դեպքում այլ է: Նաբոնիդի կառավարման 17 տարիների փոխարեն արծրունիական ցուցակի 15 տարին կարելի է բացատրել հետեւյալ կերպ: Մեր խորին համոզմամբ Թովմա Արծրունու 15 տարին գրչական սխալ է, քանզի շատ հեշտությամբ հնարավոր կլիներ **ԺԷ**-ի փոխարեն շփոթմամբ **ԺԵ** գրել, որը հայերենի պարագայում բնավ բացառված չէ: Իսկ Նաբոպալասարի առումով առայժմ դժվար է ասել, եթե իհարկե ոչ նույն սկզբունքով, չնայած նրա կառավարման տարին չհաշվելու դեպքում Ք. ա. 625 թվականը, ստացվում է 20 տարի:

Հանրագումարի բերելով Ուրուկի արքայական ցուցակը, Արքայական կանոնը, Բերոսոսի եւ Թովմա Արծրունու ցուցակները՝ կունենանք հետեւյալ տեսքը՝

34 **E. J. Bickerman**, Chronology of the Ancient World, London: Thames and Hudson, 1980, p. 109 -111:

	Ուրուկի արքայական ցուցակ	Արքայական կանոն	Բերոսոս	Թ-ովմա Արծրունի	թթ. Ք. ա.
Նաբոպալասար	21	21	21	20(Ի – Իա?)	625 - 605
Նաբուգոդոնոսոր	43	43	43	43 (Խզ)	604 - 562
Ամել – Մարդուկ	2	2	2	2 (բ)	561 - 560
Ներիգլիսսար	3,8	4	4	4 (դ)	559 - 556
Լաբաշի – Մարդուկ	0.3	—	0,9	—	556
Նաբոնիդ	17(?)	17	17	15(ԺԵ – ԺԷ?)	556 - 539

Ցուցակների համադրումից ակնհայտ երևում է նրանց համապատասխան լինելու հանգամանքը: Եւ այդ հանգամանքը մեկ անգամ ևս գալիս է հաստատելու, որ Թ-ովմա Արծրունին որպես աղբյուր՝ բավականին վստահելի է: Այսուհանդերձ կարելի է ամենայն հստակությամբ պնդել, որ Թ-ովմա Արծրունու երկի առաջին դպրության առաջին գլուխների վերաբերյալ վերոհիշյալ պնդումներն իրենց հաստատումը չեն գտնում:

Մի քանի խիստ ուշագրավ երևույթ ևս. առաջին՝ Ասորեստանի թագավոր Աշշուրբանիպալի (669 – 631/630 թթ. Ք. ա.) կառավարման վերջին տարիներին պատմագրության մեջ կան բազմաթիվ տարբեր ու հակասական տեղեկություններ: Նրա կառավարման վերաբերյալ բոլոր կարծիքներն ու տեղեկություններն ի մի բերելու համար էջեր են անհրաժեշտ: Աշշուրբանիպալի կառավարման վերջին շրջանը մինչև օրս առանձնակի աչքի չի ընկնում, եւ այդ շրջանի վերաբերյալ բոլոր տեղեկությունները մոտավոր են: Նրա կառավարման վերջին շրջանի վերաբերյալ առաջարկվել է Ք. ա. 639 թվականից մինչև Ք. ա. 626 թվականն ընկած ցանկացած որեւէ թվական: Այսինքն Հին աշխարհի մեծագույն գործիչներից մեկի կառավարման վերջին կամ մահվան թվականը լուծվում է 13 տարվա տարբերությամբ: Այս առումով արեւելագետ Դ. Սադաեը, նշելով մի քանի թվականներ, գրում է, որ նրա մահվան թվականը չի գերազանցում 7 տարին՝ նկատի ունենալով Ք. ա. 633 թվականից մինչև Ք. ա. 627 թվականն ընկած ժամանակահատվածը, եւ որը Հին Արեւելքի համար այդքան էլ նշանակալից թիվ չէ եւ ամենայն հավանականությամբ պետք է կանգ առնել վերջին՝ Ք. ա. 627 թվականի վրա[35]: Ուրարտագետ Ն. Հարությունյանը նշում է Հին Արեւելքի խոշորագույն մասնագետներից մեկի՝ Ի. Մ. Դյակոնովի բանավոր ցուցումը խնդրի վերաբերյալ, ըստ որի Աշշուրբանիպալը մահացել է 629/628, կամ հավանաբար՝ 627 թվականին, բայց կառավարել է միայն մինչև Ք. ա. 635/34 թվականը[36]: Սակայն ինչպես շուտով կհամոզվենք՝ վերոհիշյալ կարծիքն իր հաստատումը չի գտնում: Ք. ա. 635/634 թվականն, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Աշշուրբանիպալի՝ որպես Ասորեստանի թագավորի կառավարման վերջին տարվան:

35 Д. Ч. Садаев, История древней Ассирии, Москва,, 1979, էջ 157:

36 Н. В. Арутюнян, Некоторые вопросы последнего периода истории Урарту, “Древний Восток”, 1976, № 2, էջ 101, ծան. 14:

Ասորեստանի թագավոր Աշշուրբանիպալը Սարդանապաղոս անվամբ քաջ հայտնի է միջնադարյան հայ պատմիչներին՝ մասնավորապես Պատմահայր Մովսես Խորենացուն[37] եւ Թովմա Արծրունուն[38]: Թովմա Արծրունին նշում է. «Թովնոս Կոնկողեռոս, որ կոչի յունարէն Սարդանապաղոս՝ ամս **Խ**»[39]: Ինչպես տեսնում ենք, ըստ Թովմա Արծրունու՝ Աշշուրբանիպալը կառավարել է 40 տարի՝ այսօրվա հաշվարկներով Ք. ա. 669/668 թվականից մինչեւ Ք. ա. 630/629 թվականը: Ինչպես արդեն համոզվեցինք, հայ պատմիչը վստահություն է ներշնչում, եւ մեր խորին համոզմամբ նույնիսկ կարելի է պնդել, որ Աշշուրբանիպալի կառավարման վերջին տարին ընկնում է ընդհուպ մինչեւ Ք. ա. 631/630 թվականը: Եւ այս պարագայում այդքան էլ կարեւոր չէ, թե այդ 40 տարիներից Աշշուրբանիպալը քանի տարին է կառավարել Ասորեստանում կամ Բաբելոնում: Ուղղակի եւ անուղղակի փվյալները գալիս են հաստատելու, որ Աշշուրբանիպալն ու Կանդալանուն միեւնույն անձնավորությունն են: Եւ վերոհիշյալ 40 տարիներն ամենայն հավանականությամբ վերաբերում են ընդհանրապես Աշշուրբանիպալի կառավարմանը՝ Ասորեստանում եւ Բաբելոնում միասին վերցրած:

Երկրորդ երեւույթը վերաբերում է Մովսես Խորենացու եւ Թովմա Արծրունու կողմից պահպանված մի հաղորդմանը: Այն մի ժամանակավրեպ հաղորդում է, որը գալիս է Եւսեբիոս Կեսարացուց եւ տեղ է գտել թե՛ Պատմահայր Մովսես Խորենացու, թե՛ Թովմա Արծրունու հիշատակություններում: Խնդիրը Մովսես Խորենացին հիշատակել է հետեւյալ կերպ. «...քանզի ութսուն, աւելի կամ պակաս, ամօք յառաջ քան զթագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ էր Սենեքերիմս կացեալ արքայ Ասորեստանի»[40], իսկ Թովմա Արծրունու՝«... Թոնոս Կոնկողեռոս, որ յետ ՉԸ ամի Սենեքերիմ յառաջանայ ի գահ հայրենի իւրոյ թագաւորութեանն մեծաւ զօրութեամբ»[41]: Եւսեբիոսի երկում Սենեքերիմից մինչեւ Նաբուգոդոնոսոր տրված է 88 տարի, եւ ինչպես արդեն նշեցինք, այն անհամաժամանակություն է, եւ պատահական չէ, որ հայ պատմահոր կողմից արձանագրված է՝ «...ութսուն, աւելի կամ պակաս»: Թովմա Արծրունու հիշատակության մեջ կա մի փոքրիկ շեղում, որը գալիս է հենց հայ պատմիչից եւ կասկածից վեր է, որ «յետ»-ի փոխարեն պետք է լիներ «յառաջ»: Թովմա Արծրունու հիշատակությունը մենք որակում ենք որպես շփոթմունք, որովհետեւ ընդամենը երեք գլուխ հետո նա կրկին անդրադառնում է խնդրին: Եւ եթե ըստ վերոհիշյալ հաղորդման Թոնոս Կոնկողեռոսից հետո է կառավարել Սենեքերիմը, ապա ըստ հաջորդ հաղորդման՝ նա Ասորեստանի վերջին թագավորն էր, որից իշխանությունը խլեցին մարերը, իսկ վերջիններից էլ՝ պարսիկները[42]: Երեւույթին բավականին հետաքրքիր կերպով է մոտենում Պատմահայրը: Դա անտարակույս խոսում է այն մասին, որ Խորենացին այդքան էլ վստահ չի եղել իր աղբյուրի ժամանակավրեպ հաղորդումին, այդ իսկ պատճառով խուսափել է ստույգ տարի նշելուց:

Սակայն ավելի հավանական է թվում, որ Եւսեբիոս Կեսարացին հավատարիմ չի եղել իր աղբյուրին, կամ էլ այդ անախրոնիզմը գալիս է նրա օգտագործած որեւէ աղբյուրից: Չի

37 **Մովսէս Խորենացի**, Ի, ԺԹ-, ԻԱ:
38 **Թովմա Արծրունի**, Ի, Դ, Ե:
39 Անդ Ի, Դ:
40 **Մովսէս Խորենացի**, Ի, ԻԳ:
41 **Թովմա Արծրունի**, Ի, Ա:
42 Անդ Ի, Դ:

բացառվում նաեւ, որ Սարդանապալից կամ ավելի ճիշտ Նաբոպալասարից մինչեւ Նաբոնիդը շփոթած լինի Սենեքերիմից մինչեւ Նաբուգոդոնոսոր, քանզի Նաբոպալասարից, կամ Սարդանապալի (Աշշուրբանիպալ) կառավարման վերջին տարվանից մինչեւ Նաբոնիդ, այսինքն ամբողջ Նորբաբելոնյան թագավորության տարիները (626 – 539 թթ. Ք. ա.) կազմում են նույն 88 տարին: Սակայն այս ենթադրությունը հաստատող կամ ժխտող աղբյուր չունենք[43]:

Այսպիսով կարելի է ամենայն հստակությամբ պնդել, որ Թովմա Արծրունին Հին Արեւելքի պատմության համար՝ որպես սկզբնաղբյուր մեծ մասամբ ստուգապատում պատմիչ է, հատեւաբար նաեւ վստահելի: Այսքանով հանդերձ, պետք է ցավով նշել, որ հայկական աղբյուրները մեծ մասամբ անհասանելի են արտասահմանյան գիտնականներին:

43 Գոյություն ունի մի այլ տեսակետ, ըստ որի նորբաբելոնական թագավորության սկիզբը հաշվվում է՝ սկսած Նաբոնասարի կառավարումից, սակայն այստեղ չենք անդրադառնա այդ խնդրին: